Միւս կողմից, բոլշեւիկների քարոզչութեան ազդեցութեան տակ ծայր տուին զինուորական անկարգութիւններ ճակատում ու թիկունքում: Ցունիս ամսին Երեւանի զինուորները փորձ արին կողոպտելու քաղաքի շուկան. թալանեցին մի քանի խանութներ, և հազիւ յաջողուեց ազէտի առաջն առնել: Նման, տեղական բնոյթ կրող խռովութիւններ եղան և ուրիշ վայրերում:

Սակայն, դրութիւնը սկսեց սրուել և սպառնական բնոյթ ստանալ 1917 թուի աշնանը, մանաւանդ, հոկտեմբերեան յեղաշրջումից յետոյ, երբ բոլշեւիկները քայքայեցին ռազմաճակատը և ռուս զօրքը քաշեցին դէպի թիկունք, որի պատճառով ճակատի պաշտպանութեան հոգսը ամբողջապէս ծանրացաւ հայերի վրա: Իբրև հետեւանք այս դրութեան, իշխանութիւնը Երեւանի նահանգում հետզհետէ անցաւ հայերին, ռուս զօրամասերին փոխարինեցին հայկական մասեր, զանազան կէտերում սկսուեցին կազմուել նոր զօրամասեր և այլն: Քաղաքացիական իշխանութիւնը ամփոփուեց Երեւանի Հայկ. Ազգային Խորհրդի ձեռքը, իսկ զինուորական գործերը վարում էր Անդրկովկասեան Կոմիսարիատի կողմից նշանակուած հայկական զօրքերի կոմիսար Դրօն, որի գլխաւոր հոգսն էր զօրամասերի առողջացումն ու մարտունակութեան բարձրացումը:

Երեւանի Ազգ. Խորհուրդը, որ կազմուած էր Թիֆլիսի Հայոց Ազգ. Խորհրդի ձեւով՝ կուսակցութիւնների ներկայացուցիչներից, իր գոյութեան սկզբի շրջանում, անդոյն և անջիղ մարմին էր, որ գնում էր դէպքերի հոսանքի յետեւից: Ինքնուրոյն նախաձեռնութիւնից դուրկ՝ շարժւում էր Թիֆլիսից եկած հրահանգներով: Նրա մէջ մտնում էին թեմական առաջնորդ Խորէն եպ.-ը, Մ. Մուսինեանը (անկ.), Դր. Տէր-Խաչատրեանը (ժող.), Դ. Զուրեանը (ս.-յ.), բժ. Դր. Տէր-Յակոբեանը (ս.-յ.), Մ. Յարութիւնեանը (դաշն.), Ա. Աստուածատրեանը (դաշն.), Թ. Նիկողոսեանը (դաշն.) և այլն:

Երեւանի Ազգ. Խորհուրդը կեանք ստացաւ միայն 1917թ. դեկտեմբերի վերջերին, երբ Թիֆլիսից եկաւ Հ. Ազգ. Խորհրդի լիազօր ներկայացուցիչ Արամը: Ազգ. Խորհրդի առաջին իսկ նիստում նա տուեց ընդարձակ զեկուցում ընդհանուր քաղաքական դրութեան ու Թիֆլիսում տիրող մտայնութեան մասին և յայտարարեց, որ ո՛չ մի տեղից չկայ և ո՛չ մի յոյս. պէտք է լարել սեփական ուժերը՝ ապահովելու համար ճակատն ու թիկունքը: Եւ առաջարկեց անմիջապէս վերակազմել Ազգ. Խորհուրդը, ընտրել փոքրակազմ ու դիւրաշարժ մի մարմին՝ տալով նրան արտակարգ իրաւունք գործելու Ազգ. Խորհրդի գծած սկզբունքների սահմանում:

Ազգ. Խորհուրդը միաձայնութեամբ ընդունեց Արամի առաջարկը և ընտրեց Ազգ. Խորհրդի իրաւունքներով մի մարմին՝ Յատուկ Կոմիտէ՝ տալով նրան երեք ամսով գործելու կատարեալ ազատութիւն: Երեք ամսից յետոյ նա զեկուցում էր ներկայացնելու Ազգ. Խորհրդին, և վերջինս, ի հարկին, կարող էր երկարաձգել նրա լիազօրութիւնները կամ լուծել: Յատուկ Կոմիտէի մէջ ընտրեցին Երեւանում մեծ յարգանք վայելող հասարակական գործիչ Մկրտիչ Մուսինեանը, որ այն ժամանակ ո՛չ մի կուսակցութեան չէր պատկանում և միայն 1919 թուին մտաւ Հ. Յ. Դաշնակցութեան